

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ 6-րդ ԴԱՍԱՐԱՆ  
ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ, 2022 թ

Տևողությունը – 150 րոպե

1. Թվի  $\frac{1}{4}$  մասը փոքրացրին 40% –ով: Ստացված թիվը քանի՞ տոկոսով է փոքր սկզբնական թվից:

- 1) 76                      2) 80                      3) 85                      4) 90

2. Բազմազավակ ընտանիքի երեխաներից մեկը ունի 4 եղբայր , իսկ մյուսը այնքան քույր ունի, որքան՝ եղբայր: Ամենաշատը քանի՞ երեխա կա այդ ընտանիքում:

- 1) 11                      2) 10                      3) 9                      4) 8

3. Ինչ-որ տարվա փետրվար ամսում հինգշաբթի օրերը ավելի քիչ էին, քան երկուշաբթի օրերը: Շաբաթվա ի՞նչ օր էր այդ տարվա առաջին օրը:

- 1) երկուշաբթի      2) երեքշաբթի      3) չորեքշաբթի      4) ուրբաթ

4. Կենտ թիվը, որն ունի 6 բաժանարար, բազմապատկեցին 4-ով: Քանի՞ բաժանարար ունի ստացված թիվը:

- 1) 8                      2) 12                      3) 18                      4) 24

5. Ինչ-որ թվի թվանշանների արտադրյալը հավասար է 245-ի: Նշվածներից ո՞րը չի կարող լինել այդ թվի հաջորդ թվի թվանշանների արտադրյալը:

- 1) 280                      2) 294                      3) 315                      4) 490

6. Սենյակում կա 18 մարդ՝ ճշտախոսներ և ստախոսներ ( ճշտախոսը միշտ ճիշտ է խոսում, իսկ ստախոսը միշտ խաբում է ): Նրանցից 7 ասացին. «Սենյակում ճշտախոսների քանակը զույգ թիվ է», մեկն ասաց. «Սենյակում ճշտախոսները ավելի քիչ են, քան ստախոսները», իսկ մյուսները ասացին. «Սենյակում ճշտախոսների քանակը կենտ թիվ է»: Քանի՞ ճշտախոս կա սենյակում:

- 1) 7                      2) 8                      3) 10                      4) 11

7. Անին ունի 10, 20, 50, 100 դրամանոց մետաղադրամներ՝ յուրաքանչյուրից մեկ հատ: Քանի՞ տարբեր գումարներ նա կարող է վճարել՝ առանց մանր ստանալու:

- 1) 14                      2) 15                      3) 16                      4) 18

8. Եթե երկնիշ թվի տասնավորը փոխարինեն 1-ով, ապա թիվը 6 անգամ կփոքրանա: Քանի՞ այդպիսի երկնիշ թիվ կա:

- 1) 1                      2) 2                      3) 3                      4) 4

9. Գտնել այն եռանիշ թվերի քանակը, որոնք թե՛ 2-ով բազմապատկելիս, թե՛ 2-ի բաժանելիս ստացվում են եռանիշ թվեր:

1) 300

2) 299

3) 150

4) 140

10. Պարկում եղած այլուրը տեղավորեցին 24 տոպրակների մեջ, որոնց մի մասը 5 կգ-անոց են, իսկ մնացածները 3 կգ-անոց : 5 կգ-անոց տոպրակները միասին կշռում են այնքան, որքան 3 կգ-անոցները միասին: Քանի՞ կգ այլուր կար պարկում:

1) 75

2) 90

3) 96

4) այլ պատասխան

11. Մի եռանիշ թվի թվանշանների գումարը 8 անգամ մեծ է մյուս եռանիշ թվի թվանշանների գումարից: Ամենաքիչը ինչքա՞ն կարող է լինել այդ թվերից մեծի և փոքրի տարբերությունը:

12. 222-ը ինչ-որ թվի բաժանելիս մնացորդում ստացվում է 17, իսկ 333-ը այդ նույն թվին բաժանելիս մնացորդում ստացվում է 5: Ո՞ր թվի վրա էին բաժանել:

13. Եթե եռանիշ թվին ձախից կցագրենք 7 թվանշանը, ապա կստանանք 2 անգամ ավելի մեծ թիվ, քան աջից 4 կցագրելիս: Գտնել սկզբնական եռանիշ թիվը:

14. Էլեկտրոնային ժամացույցը ցույց է տալիս ժամը և րոպեն (օրինակ 16 : 45): Օրվա մեջ քանի՞ րոպե է կազմում այն ամենաերկար ժամանակահատվածը, որի ընթացքում ժամացույցի լուսատախտակին կլինի գոնե մեկ 5 թվանշան:

15. Արամը և Բաբկենը շախմատ են խաղում այսպիսի պայմանով. Եթե Բաբկենը պարտվի, ապա նա Արամին պետք է այնքան ընկույզ տա, որքան կա Արամի մոտ, իսկ եթե Արամը պարտվի, ապա նա Բաբկենին պետք է տա 36 ընկույզ: Առաջինը պարտվեց Բաբկենը, երկրորդը՝ Արամը, երրորդը՝ Բաբկենը և չորրորդը՝ Արամը: Դրանից հետո Արամը 80 ընկույզ ունեցավ: Սկզբում քանի՞ ընկույզ ուներ Արամը: